թիւնները: Նա մատնանշել է, որ բացի արտաքին ուժերի ազդեցութեան տակ հայերի և թաթարների միջև ծագած դժգոհութիւնից, այլ երևոյթ նկատելի չէ: Հայը ապրում է միւս ազգերի հետ հաշտ ու համերաշխ: Թաթարների և հայերի անհամաձայնութիւնն էլ ժամանակաւոր է, ընդգծել է նա. երբ վերջնականապէս Հայաստանը ճանաչուի ոմենքի, ինչպէս նաև Տաճկաստանի կողմից, թիւրիմացութիւնները կը վերանան բոլորովին:

Մասնաժողովին զբաղեցրել է մի ուրիշ խնդիր ևս. Հայաստանը ստեղծւում է դժուարին պայմաններում. այդ բանը մատնանշել է լորդ Քըրզընը իր մի ճառում՝ ասելով, թէ չկայ աւելի դժուար բան, քան Հայաստանի ստեղծումը. մինչդեռ միւս նորակազմ պետութիւնները իրենց ժողովուրդներն ամփոփած ունեն իրենց սահմանների մէջ, Հայաստանի ժողովուրդը ցրուէ եկած ամէն կողմ: Ահա այդ հարցն է զբաղեցրել մասնաժողովին, և նա մեր պատուիրակութիւնից պահանջել է տեղեկներ այն մասին, թէ հնարաւո՞ր է դրած սահմանների մէջ հայ տարրի մեծամասնութիւն կազմելը և թէ գաղթավայրերի հայերը հայրենիք կը վերադառնա՞ն: Ի հարկէ, պահանջուած տեղեկները մանրամասն վիճակագրական տեղեկութիւններով ներկայացուած են մասնաժողովին:

Մարտ 30-ին տեղի է ունեցել վերջին նիստը, ուր և պատրաստուել է զեկուցում Սան Ռէմօի խորհրդաժողովի համար:

Այդ ժամանակամիջոցում Ազգերի Դաշնակցութեան առաջարկուած է եղել քննելու Հայաստանի մանդատի խնդիրը. ընտրուել է մի մասնաժողով, որ և զբաղուել է այդ հարցով. նրա կողմից մշակուած է օկուպացիայի ծրագիրը: Մասնաժողովին գլխաւորապէս զբաղեցրել է այն հարցը, թէ ով պէտք է վերցնի պատասխանատուութիւնը, ըստ որում հարցում է ուղղուած մեր պատուիրակութեան, թէ՝ եթէ ոչ մի պետութիւն յանձն չառնի Հայաստանի հոգատարութիւնը, հայ ժողովուրդը սեփական ուժերով կարո՞ղ է նման պարտականութիւն վերցնել իր վրա: Պատուիրակութիւնը պատասխանել է, որ եթէ ոչ մէկը չառնի, ի հարկէ, հայ ժողովուրդը պատրաստ է իր ուժերով կազմակերպել իր պետութիւնը: Անգլիոյ վարչապետն ևս իր ճառում մատնանշել է այդ հանգամանքը՝ ասելով, թէ հայը կենսունակ ժողովուրդ է, կարող է 40,000-անոց բանակ կազմակերպել, նաև թէ հայերը պէտք է սովորեն իրենց բախտը տնօրինելու սեփական ուժերով:

Սան Ռէմօի խորհրդաժողովը ապրիլ 28-ին վերջացրել է իր աշխատանքները. մայիս 10-ին Տաճկաստանի պատուիրակները Փարիզում պէտք է ստանան պայմանագիրը, որի վաւերացումից յետոյ կորոշուի նաև Հայաստանի բախտը:

Հիւսիսային սահմանների վերաբերմամբ մեր տեսակէտն այն է, որ Հարևան հանրապետութիւնների հետ խաղաղ բանակցութիւն վարելով պէտք է վերջնական համաձայնութեան գանք: Վրաստանի կողմից ընդունուած է մեր տեսակէտը: Ազրբէջանի հետ բանակցելու բազմաթիւ փորձեր եղան, բայց, ցաւօք սրտի պէտք է մատնանշենք, որ նրա նախկին կառավարութեան բռնած դիրքը Հայաստանի վերաբերմամբ վերացնում է բանակցութեան ամէն մի հնարաւորութիւն. նա յամառօրէն դնում էր իր սահմաններն այնպէս, որ մէջ է առնում Հայաստանի մեծ մասը. այդպիսի նախադրի շուրջը մենք բանակցութիւն վարել անկարող էինք:

Ամերիկան շարունակում է հետաքրքրուել մեր դատով. ապրիլ 4-ին ամերիկեան սենատը մերժել է վաւերացնել Վերսայլի դաշնագիրը և Ազգերի Դաշնակցութեան կանոնագրութիւնը ու յայտնել է նախագահ Վիլսընին, որ պատերազմական դրութիւնը Գերմանիայի հետ վերացած է: Դրանից յետոյ առաջարկուել է մի բանաձև ճանաչելու Հայաստանի անկախութիւնը, որի